Ալեքսանդր Շիրվանզադե

Սարգսի վիշտը

Գիշերվա երկու ժամն էր արդեն, երբ Սարգիս Բաղաղյանը ժողովարանի սանդղքից ցած իջավ տուն գնալու: Նա հուզված էր, կատաղած:

Ուրեմն չո՞րս օր, հարցրեց նա սանդղքի ստորոտում կանգնած ավագին:

Այո, չորս օր և չորս գիշեր, պատասխանեց ավագը:

Սարգիսը մի հուսահատական շարժումն արավ, հագավ սպասավորի ձեռքով վերարկուն, գալոշները, վերցրեց անբաժան անձրևանոցը և դուրս գնաց:

Չորս օր և չորս գիշեր: Անխիղճներ, անաստվածներ: Չորս օր և չորս գիշեր կլուբը պիտի փակ մնա: Ինչո՞ւ: Որովհետև զատիկ է, եկեղեցի գնալու, աղոթք անելու, ոգի և մեղքեր քավելու օրեր:

Ո՞ւր պիտի գնամ, ի՞նչ պիտի անեմ, ասում էր Սարգիսը, բարձրանալով մի նեղ, մութ փողոցով դեպի այն տունը, ուր բնակվում էր:

Այո, ո՜ւր գնա, ի՜նչ անի այդ շորս օրը: Կլուբը նրա համար ամեն ինչ էր՝ և՛ տուն, և՛ ընտանիք, և՛ թատրոն, և՛ զվարճության ու տխրության վայր: Միակը աշխարհի երեսին, որ նա ուներ, միայն մեկը: Երեկոները նա գալիս էր ժողովարան ամենից ուշ, մինչև որ կտային «տուգանքի» նախավերջին զանգակը: Նա ցերեկներն էլ էր այնտեղ: Գալիս էր առավոտյան տասը ժամին ծառաների և սպասավորների հետ և գնում էր երեք ժամին: Ճաշում էր, քնում, թեյ խմում և նորից գալիս կլուբ: Երեսունուհինգ տարի էր նա անդամ էր և ոչ մի երեկո բաց

չէր թողել, ոչ մի երեկո այդ երկար ժամանակվա ընթացքում: նրան ճանաչում էին ամենքը: Նա ճանաչում էր ամենքին՝ սկսած կլուբի դռնապանից մինչև ավագների խորհրդի նախագահը: Նա ճանաչում էր կլուբում ամեն ինչ, սկսած սանդղքի մոտ դրած վաղեմի չորացած ալյանդրից մինչև մեծ դահլիճի բոլոր անկյունները:

Նա թուղթ չէր խաղում, ոչ էլ շախմատ, ոչ էլ բիլիարդ և ոչ էլ նարդի: Գալիս էր մտնում նախ ընթերցարան, թերթում էր բոլոր լրագրերը: Չէր կարդում, այլ միայն թերթում էր: Հետո դանդաղ քայլերով մոտենում էր թուղթ խաղացողների սեղաններին, ամենքին հերթով, նայում էր տխուր, անտարբեր հայացքով, նայում, հետո հեռանում, նորից մոտենում, նորից հեռանում:

Նա շատ լավ գիտեր, որ թուղթ խաղացողներն իրան չեն սիրում. նրա «ոտը» համարելով անհաջող: Բայց այնուամենայնիվ մոտենում էր ամենքին, երբեմն նույնիսկ, առանց թույլտվություն խնդրելու, նստում խաղացողների քով և հետևում խաղին:

Այս էր նրա միակ հաճույքը: Կլուբը իր խաղացողներով, իր՛ բազմաթիվ սենյակներով, իր քնահարբ ծառաներով, իր հնամաշ կահկարասիով: Դա նրա միակ աշխարհն էր, իր ամբողջ կյանքը, ամբողջ: Ուրիշ նա ոչինչ չուներ:

Եվ հանկարծ նրան ասում են, թե չորս օր ու չորս գիշեր պիտի փակ մնա իր սիրեցյալ, իր պաշտելի ժողովարանը:

Հանկա՞րծ:- Ոչ: Ամեն տարի միևնույնը, երեսունուհինգ տարի: Եվ տարենը չորս օր, մի օր էլ ջրօրհնեքին Սարգսին պատժում էին: Եվ ի՜նչ պատիժ: Չորս կամ հինգ օր ու գիշեր գլխիվայր կախված մնալ օդի մեջ: Անտուն, անտեր:

Օհ, անաստվածներ, օհ, անխիղճներ:

Սարգիսը, ամուրի, միայնակ, ազգականներից, բարեկամներից, ծանոթ ընտանիքներից զուրկ Սարգիսը, արտասվեց: Եվ միայն գիշերային լռությունն ու մթությունն իմացան, թե ո՞րքան մեծ է նրա վիշտը: